«ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍՈՎ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2022 թվականի N ____L

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍՈՎ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603 00 000 0՝ պղնձի խտահանքեր, 2613՝ մոլիբդենի խտահանքեր, 7202 70 000 0՝ ֆեռոմոլիբդեն, 8102՝ մոլիբդեն և դրանից պատրաստված արտադրատեսակներ (բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8102 97 000 0 ապրանքային դիրքին պատկանող թափոնի և ջարդոնի) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանումը դեպի երրորդ երկրներ իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2022 թվականի մարտի 3-ի թիվ 266-Ն որոշմամբ սահմանված լիցենզիաների ստացման նպատակով արտահանման տուրք վճարող, ընդերքօգտագործման իրավունք ունեցող (մինչև 10մլն տ հանքաքար տարեկան արդյունահանման իրավունք ունեցող) կազմակերպություններին տրամադրել սուբսիդիա համաձայն հետևյալ բանաձևի՝

ՍԳ=ԱՏ-((ՊՄ-ՊՆ)*0.25/2)

ՍԳ- սուբսիդավորվող գումար, բայց ոչ ավել քան 100000դրամ 1տ համար

ԱՏ- Արտահանման տուրք տվյալ արտադրատեսակների մասով

ՊՄ- Պղնձի բորսային եռամսյակային միջին գնի և դոլլարի միջին գնի արտադրյալ

ՊՆ- Նորմալ շահութաբերության շեմ համարվող հաստատուն, որը իրենից ներկայացնում է 2021թ-ին արտահանման տուրքի ներդրման պահին Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկված նորմալ շահութաբերության շեմը `3120000 ՀՀ դրամը(6500$*480ՀՀ դրամ), ԿԲ-ի կողմից 2022թվականի համար ներկայացված 9% գնաճով համապատասխանեցնելու դեպքում:

2. Պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտին հաջորդող ամսվա մինչև 5-րդ օրը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների և սուբսիդավորման ենթակա գումարի վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝

1) որոշման 2-րդ կետին համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 2-րդ կետով սահմանված առաջարկություններում նշված գումարի չափով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու վերաբերյալ:

2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին մասին համապատասխան կառավարութան որոշման ընդունումից հետո 5 օրյա ժամկետում ապահովել շահառու կազմակերպությունների ծանուցումը՝ սույն որոշման շահառու լինելու վերաբերյալ:

3) Կազմակերպության դիմումը և նախարարության ծանուցման փաստը հավաստող փաթեթը կազմակերպությունից ստանալուց հետո 5 օրվա ընթացքում կնքել սուբսիդավորման պայմանագիր համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ-ի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման:

4) Կազմակերպության կողմից սուբսիդիա ստանալու վերաբերյալ դիմումը ներկայացնելու վերջնաժամկետ է հանդիսանում 2022 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ:

4. Սուբսիդիայի հաշվարկման և տրամադրման համար հիմք հանդիսացող ժամանակահատված սահմանել 2022 թվականի հունիսի 1-ից նոյեմբերի 30-ը։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

2022 թ. .....

Երևան